

16 Սոյն հաշուքնկեր էր նախնական,  
 վաճառապետ Ղազարուն այն,  
 Որ Պետրոսիւ առ փոխարքայն  
 'Նեղշաց Սարգսի լինէր բերան:

17 Ձոր առ գործոյն սադրողական  
 'Նա պարսաւ էր յայտ յանդիման,  
 Ձոր եւ գործէր յոյժ զըղջական  
 Փաստիւ զօրեղ եւ խրղճական:

18 Շահեալ ըզնա շահէր զճամայն,  
 Գըտեալ ինքեան զողջն համաձայն,  
 Բըռնի զՅակոբ առնէր հաւան  
 Առ կատարեալ Սարգսի զերծման:

19 Առ այսպիսի այր գովանի.  
 Բարեացապարտ եւ պատուելի,  
 Գիմէր Սարգիս զուարճալի,  
 Հարուստ բանիւ շնորհակալուի:

20 Որ ողջունեալ զ՞նովաւ փարի,  
 Օրհնեալ ըզնա բերանալի  
 Մեծ գոհութեամբ յոյժ արժանի  
 Վասըն ջանից սիրոյն սրբաի:

21 Յետոյ երթայր նա առ մի մի,  
 Գովեալ ըբռննս, իշխանս յարգի,  
 Որք լալագին և՛ ուրախալի  
 Փարին զինքեամբ համբուրալի:

22 Այնց որք եղեն նրմա յայտնի  
 Բասրիչ, մատնիչ յամենայնի,  
 'Ներեալ գըթով անպատմելի՝  
 Ձանցեալս առնէր անյիշելի: